Թուրքիայի արդի արտաքին քաղաքականության ձևավորման նախադրյալները, մարտահրավերներն ու հեռանկարները

ՏԻԳՐԱՆ ԹՈՐՈՍՅԱՆ
Երևանի պետական լեզվա-հասարակագիտական համալսարան,
ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱԿՅԱՆ
Երևանի պետական լեզվա-հասարակագիտական համալսարան

Ստացվել է 9.05.2014
Ընդունվել է 10.12.2014

Հոդվածում վերլուծվում են երկբևեռ աշխարհակարգի փլուզման արդյունքում առաջացած նոր աշխարհաքաղաքական իրավիճակի հետևանքով Թուրքիայի արտաքին քաղաքականությունում տեղի ունեցած էական փոփոխությունների նախադրյալները, նպատակները և տեսական հիմքերը: Քննարկվում են «Նոր օսմանականություն» գաղափարախոսության և «Արդարություն և զարգացում» կուսակցության իշխանության ժամանակաշրջանում արտաքին քաղաքականության տեսական հիմք հռչակված «Ռազմավարական խորություն» տեսության ընդհանրություններն ու տարբերությունները: Աշխարհաքաղաքական մրցակցության համատեքստում դիտարկվում են արտաքին քաղաքականության հռչակված նպատակների և դրանց իրականացման արդյունքների համապատասխանության վիճակն ու հեռանկարները: Ըստ «Ռազմավարական խորություն» տեսության սկզբունքների կատարված վերլուծությունը բացահայտում է, որ կիրառվող արտաքին քաղաքականությունը լիովին չի համապատասխանում՝ ոչ այդ տեսությանը, ոչ «Նոր օսմանականություն» գաղափարախոսությանը, այլ՝ Աթաթուրքի կիրառած իրավիճակային մարտավարությանը: Այդ պատճառով, թեև առկա են Թուրքիայի դիրքերի էական բարելավման լուրջ հեռանկարներ՝ Հարավային Կովկասի և Մերձավոր Արևելքի գազային պաշարները Եվրոպա տեղափոխելու ծրագրերը համապատասխան ձևաչափով իրականացնելու պարագայում, սակայն այդ ճանապարհին ուրվագծվում են նաև լուրջ մարտահրավերներ ու բարդ խնդիրներ:

Բանալի բառեր
Թուրքիա, արտաքին քաղաքականություն, «Նոր օսմանականություն», «Ռազմավարական խորություն» տեսություն, Մերձավոր Արևելք, Հարավային Կովկաս, աշխարհաքաղաքական մրցակցություն

Թուրքիայի արտաքին քաղաքականության փոփոխության անհրաժեշտությունը ԽՍՀՄ փլուզումից հետո

1980-ականներին ավելի ու ավելի ակնհայտ էր դառնում, որ թեև Օսմանյան կայսրության փլուզումից հետո ձևավորված Թուրքիան Քեմալ

Աթաթուրքի ջանքերով կարողացավ պահպանել զգալի տարածք և հաղթահարել մի շարք բարդ մարտահրավերներ, այդուհանդերձ ներքաղաքական (արևելյան շրջանների զարգացման հիմնախնդիր, քրդական խնդիր, զինվորական վերնախավի հսկայական քաղաքական ազդեցություն, հասարակության կառուցվածքի և գիտակցության էական փոփոխություններ և այլն) և արտաքին քաղաքական (Եվրամիությանն ինտեգրման իրական հեռանկարի բացակայություն[1], տարածաշրջանային համագործակցության բացակայություն և լուրջ խնդիրների առկայություն հարևան երկրների հետ, տարածաշրջանում ամերիկյան քաղաքականության կցորդի կարգավիճակ, Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի հետ կապված բարդություններ և այլն) մի շարք հիմնախնդիրների առկայությունը պահանջում էր թե ներքին, թե արտաքին հարաբերությունների համար գտնել հետագա զարգացման բարենպաստ պայմաններ ապահովող միանգամայն նոր գաղափարներ և մոտեցումներ: ԽՍՀՄ փլուզումը Թուրքիայի առջև ծառացած մարտահրավերների հաղթահարման տեսակետից ունեցավ երկակի նշանակություն: Մի կողմից, այն առաջադրեց նոր մարտահրավեր՝ զգալիորեն թուլացնելով Թուրքիայի նշանակությունը՝ որպես ԱՄՆ գլխավոր գործընկեր ԽՍՀՄ հարավային սահմանների մոտ, մյուս կողմից՝ միանգամայն նոր աշխարհաքաղաքական իրավիճակը և երկբևեռ աշխարհակարգի փլուզման ու երկրորդ բևեռի վերանալու արդյունքում տարածաշրջանում առաջացած ուժային վակուումը տեսականորեն անսահմանափակ հնարավորություններ ստեղծեցին Թուրքիայի համար: Պատահական չէ, որ 1980-ականների վերջին ու 1990-ականների սկզբին աննախադեպ ակտիվություն արձանագրվեց Թուրքիայում՝ ներքին և արտաքին քաղաքականության արմատական վերանայման գաղափարների առաջադրման, ինչպես նաև դրանց իրագործման փորձերի ուղղությամբ:

1983-1989թթ. զբաղեցնելով Թուրքիայի վարչապետի պաշտոնը, իսկ 1989թ. ընտրվելով Թուրքիայի նախագահ՝ Թ. Օզալը կտրուկ փոփոխություններ նախաձեռնեց Թուրքիայի ինչպես արտաքին, այնպես էլ

[1] **Sayari S.**, Turkey: The Changing European Security Environment and the Gulf Crisis, *Middle East Journal*, **46**, 1, Winter, 1992, 9-21.

ներքին քաղաքականությունում[2]: Նա առաջին թուրք պետական գործիչն էր, ով կասկածի տակ դրեց Քեմալ Աթաթուրքի օրոք մշակված արտաքին քաղաքականության սկզբունքների արդյունավետությունը և փորձեց Թուրքիան տանել այլընտրանքային ուղիով[3]: Այդ ուղին էական փոփոխություններ էր առաջարկում ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականության համար: Երկու ոլորտներում էլ փորձ արվեց վերանայել իսլամի դերը: Սերտ կապեր ունենալով «Նակշբանդիա» կրոնական միաբանության հետ՝ Թ. Օզալը ձգտում էր թուլացնել քեմալիզմի ու աթեիստական քաղաքականության ազդեցությունը, միաժամանակ, փորձում իսլամը ներկայացնել որպես թուրքական ինքնության էական ու անհրաժեշտ բաղադրիչ[4]: Թուրքական ակադեմիական շրջանակները համարում են, որ, Օզալի «թուրքական իսլամն» ավելի չափավոր էր և համատեղելի լիբերալիզմի ու ժողովրդավարության հետ՝ ի տարբերություն իրանական կամ արաբական իսլամի[5]: Օզալը նաև ներքաղաքական կյանքի բարելավման կարևոր խնդիր էր համարում փոխհամաձայնությունը Թուրքիայում գոյություն ունեցող տարբեր ինքնությունների միջև[6]: Նա իսլամի կարևոր դերակատարությունն էր տեսնում նաև արտաքին հարաբերություններում: Ի տարբերություն քեմալական քաղաքականությանը, որը Թուրքիան տեսնում էր աշխարհիկ եվրոպական պետություն՝ մեկուսացնելով այն մահմեդական աշխարհից, Թ. Օզալի քաղաքականությունը ենթադրում էր ակտիվ հարաբերություններ մուսուլմանների հետ Բալկաններում, Մերձավոր Արևելքում և Կովկասում, այսինքն՝ Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնված տարածքներում: Իհարկե, այդ գաղափարի իրագործման կարևոր խթան էր ԽՍՀՄ-ի և Հարավսլավիայի փլուզումը: Թուրքիան արդեն կարող էր անմիջական հարաբերություններ

---

[2] **Anderson P.,** After Kemal, *London Review of Books*, **30**, 18, 25, September 2008, 17-18.

[3] **Ataman M.,** Leadership change: Özal Leadership and Restructuring in Turkish Foreign Policy,- *Alternatives: Turkish Journal of International Relations*, **1**, 1, Spring, 2002, 120-153.

[4] **Gunter M. M.,** Historical Dictionary of the Kurds (Historical Dictionaries of Peoples and Cultures), Scarecrow Press, 2010, 224.

[5]**Laçiner S**., Ozalism (Neo-Ottomanism): An Alternative in Turkish Foreign Policy?, Yonetim Bilimleri Dergisi (1:1-2), *Journal of Administrative Sceincies*, 2003-2004, 167-181.

[6] **Taşpınar Ö.,** The three strategic visions of Turkey, available at http://acturca.wordpress.com/2011/03/08/three-strategic-visions/.

հաստատել թյուրքալեզու Ադրբեջանի, Ղազախստանի, Ուզբեկստանի, Թուրքմենստանի, Ղրղզստանի[7], Բոսնիայի, Կոսովոյի և կոմունիստական վարչակարգից հրաժարված Ալբանիայի հետ: Ընդ որում, Օզալն ընդգծում էր այդ հարաբերությունների մեջ տնտեսական և մշակութային բաղադրիչների առկայությունը՝ ժխտելով որևէ ագրեսիվ կամ նվաճողական նկրտում: Թեև Օզալն իր սկզբունքները երբեք չի բնութագրել որպես «նոր օսմանականություն», ինչպես հետագայում՝ 2000-ականներին ձևավորված քաղաքականությունը՝ դրա գլխավոր տեսաբան Ա.Դավութօղլուն, սակայն թուրքական ակադեմիական շրջանակները երկու դեպքում էլ օգտագործում են հենց «նոր օսմանականություն» ձևակերպումը[8]: Այդուհանդերձ, Թ. Օզալի «նոր օսմանական» գաղափարները վերջնական հաջողության չհասան, քանի որ դրանք Թուրքիայի համար այդ ժամանակահատվածում խիստ հեղափոխական էին ու անհրաժեշտ քաղաքական աջակցություն չստացան: Ճիշտ է, զինված ուժերի վերնախավի դժգոհությունը չվերածվեց ավանդական դարձած հեղաշրջման, սակայն միայն այն պատճառով, որ 1993թ. գարնանը Թ. Օզալն անսպասելիորեն մահացավ: Թվում էր, թե երկրի նախագահի պաշտոնում քեմալական գաղափարախոսության կողմնակից Սուլեյման Դեմիրելի ընտրվելը փակեց «նոր օսմանականության» շրջանը, սակայն աշխարհաքաղաքական նոր իրողությունները թելադրում էին արտաքին քաղաքականության ուղեգծի առանցքում պահպանել Օզալի հռչակած «թյուրքական աշխարհի» ձևավորման նպատակը[9]: Նորանկախ թյուրքալեզու հանրապետություններ իր այցի ընթացքում Թուրքիայի վարչապետ Ս. Դեմիրելը հայտարարեց[10], որ նոր թյուրքական աշխարհ և նոր քարտեզ է ձևավորվում, հինգ նոր դրոշներ իրենց կիսալուսիններով ավելացել են Թուրքիայի դրոշի կողքին և Մեծ թյուրքական աշխարհը տարածվելու է Ադրիատիկից մինչև Չինական ծով: Թուրքիան փորձում էր վերադառնալ ու վերադարձնել հարյուր տարի առաջ կորցրածը, սակայն

[7] **Fuller G.,** Turkey Faces East: New Orientations toward the Middle East and the Old Soviet Union, Santa Monica, CA: Rand, 1997, 37-39.
[8] **Laçiner S**.,…
[9] **Naegele J.**, Turkey: Foreign Policy Objectives- Part Two, RFE/RL, 13.08.1998, available at www.binfo.com/places/Bulgaria/news/98-08/aug13b.rfe; *Turkish Daily News*, 05.06.1992.
[10] **Pipes D**., The Event of Our Era, New York: Council on Foreign Relations Press, 1994, 16; **Winrow M. G.,** Turkey's Relations With the Transcaucasus and the Central Asian Republics, *Perceptions: Journal of International Affairs*, March-May, 1996, 136.

մի քանի տարին բավական էր հասկանալու համար, որ արևելյան ուղղությամբ Մոսկվան դա թույլ չի տա[11]: Հետաքրքիր է, որ եթե մեկ դար առաջ Թուրքիան խորհրդային Ռուսաստանին խոստանում էր դառնալ կոմունիզմի ջահակիրն Արևելքում՝ դրա դիմաց Մոսկվայից ստանալով ֆինանսական ու ռազմական էական աջակցություն, որի շնորհիվ հաջողվեց պահպանել Թուրքիայի ներկայիս տարածքն ու կենսունակությունը, ապա ԽՍՀՄ փլուզումից հետո Արևմուտքին էր խոստանում դառնալ արևմտականացման ջահակիրն Արևելքում: Անգամ մշակվել էր դրա «տեսական» հիմքը՝ տիրապետող մահմեդական բնակչություն ունեցող երկրներում ժողովրդավարական վարչակարգով աշխարհիկ պետությունների ձևավորման «թուրքական մոդել»[12], որի ներդրումով պետք է չեզոքացվեին Կենտրոնական Ասիայի և հարակից երկրներում ռուսական և իրանական ազդեցությունները: Իհարկե, ինչպես դարասկզբին դժվար էր պատկերացնել «թուրքական կոմունիզմի» հաստատումը Արևելքում, այնպես էլ մեկ դար հետո՝ ժողովրդավարացման «թուրքական մոդելի» հաջողությունը նախկին խորհրդային իսլամական հանրապետություններում: Համոզվելով, որ չունի անհրաժեշտ ներուժ ոչ «թյուրքական աշխարհի» ձևավորման, ոչ աշխարհաքաղաքական մրցակցության համար, Անկարային մնում էր հրաժարվել սեփական մեծ խաղից, վերականգնել իր ռազմավարական կարևորությունը և, օգտագործելով տարածաշրջանում ունեցած ազդեցություններն, առավել օգուտ քաղել մյուսների (Միացյալ Նահանգներ, Ռուսաստան, Եվրամիություն) ռազմավարական ծրագրերում գնահատելի դերակատարությունից[13]: Հատկանշական է, որ օսմանյան կայսերական տարածքային ընդգրկումով և կրոնական ուղղվածությամբ արտաքին հարաբերությունների կառուցումն ու գործունեության տարածքի ձևավորումը ոչ միայն Օզալի ու Դեմիրելի արտաքին քաղաքական պատկերացումներում էր ընդհանուր, այլև թուրքական բոլոր քիչ թե շատ ազդեցիկ քաղաքական ուժերի՝ պանթյուրքիստական Ազգային շարժում կուսակցությունից մինչև արդիականացման (արևմտականացման)

---

[11] **Torosyan T.,** The Return of Turkey, *Russia in Global Affairs*, 3, July-September, 2009, 120-129.

[12] **Bal I.,** The Turkish Model and Turkic Republics. *Percptions: Journal of International Affairs*, September-November 1998, **III**, 3.

[13] **Oran B.**, The Turkish Approach to Transcaucasia and Central Asia, *Ole Hoiris and Sefa Martin Yürükel, eds., Contrasts and solutions in the Caucasus,* Aarhus: Aarhus University Press, 1998, 462.

կողմնակիցներ[14]: Ավելին, ամենայն հավանականությամբ երկբևեռ աշխարհակարգի փլուզման ուժեղ ազդեցության ներքո Թուրքիայի ակադեմիական շրջանակները ևս միասնական էին արտաքին քաղաքականության տեսական հիմքերի առնչությամբ: Դրանք կառուցված են արևմտյան հեղինակների դասական աշխարհաքաղաքական մոտեցումների, հատկապես Հ. Մաքինդերի Եվրասիական կենտրոնի գաղափարի հիման վրա: Սկսած ակնառու նմանակումից՝ Ռ. Օզեյի «Թյուրքական աշխարհը համաշխարհային թատերաբեմում» մենագրությունից[15] ու նրա մշակած «Թուրքերի կենտրոնական գերիշխանության» հայեցակարգից, որի համաձայն «Անատոլիան հանդիսանում էր «Աշխարհի ամրոցը», ուստի Թուրքիան, տիրապետելով Անատոլիան, հնարավորություն է ստանում վերահսկելու Բալկաններն ու Եվրասիան», մինչև Ա. Դավութօղլուի «Ռազմավարական խորություն» տեսությունը, որը հետագայում հռչակվեց պաշտոնական Անկարայի արտաքին քաղաքականության տեսական հիմքը[16]:

Թուրքիայի արդի արտաքին քաղաքականության տեսական հիմքը. «Նոր օսմանականությո՞ւն», թե՞ «Ռազմավարական խորություն»

2002թ. խորհրդարանական ընտրություններում «Արդարություն և զարգացում» կուսակցության (ԱԶԿ) հաջողությունից հետո Ա. Դավութօղլուի «Ռազմավարական խորություն» տեսությունը հռչակվեց Թուրքիայի արտաքին քաղաքականության տեսական հիմք: Տեսության հեղինակը, կառավարությունում իր գործունեությունը սկսելով որպես վարչապետ Ռ. Թ. Էրդողանի խորհրդական, ապա ստանձնեց արտաքին գործերի նախարարի պաշտոնը, իսկ ավելի ուշ, երբ վարչապետ Էրդողանը հաղթեց նախագահական ընտրություններում, նշանակվեց Թուրքիայի վարչապետ: Սակայն հարկ է նշել, որ նա դեմ է «նոր օսմանականություն» արտահայտության օգտագործմանը ԱԶԿ-ի կառավարման շրջանում Թուրքիայի քաղաքականության բնութագրման նպատակով: Որպես ակադեմիական շրջանակներից քաղաքականություն տեղափոխված մարդ, նա լավ է գիտակցում, որ այդ արտահայտության նկատմամբ

[14] **Oran B.**, …
[15] **Özey R.**, Dünya Platformunda Türk dünyası, İstanbul, 1999, 22-23.
[16] **Davutoğlu A.**, Stratejik Derinlik: Türkiyenin Uluslararası Konumu, Istanbul, 2001.

Թուրքիայի իշխանությունների դրական վերաբերմունքը կարող է խոչընդոտել նախկինում Օսմանյան կայսրության կազմում եղած պետությունների հետ հարաբերությունների զարգացմանը: Առավել ևս, որ թեև այդ կայսրության փլուզումից անցել է մոտ մեկ դար, սակայն իր հպատակների նկատմամբ ամենադաժան վերաբերմունք դրսևորած կայսրության համբավը մնում է: Պատահական չէ, որ որպես «նոր օսմանականության» ժխտման կարևորագույն փաստարկ Ա. Դավութօղլուն նշում է, որ Թուրքիայի հանրապետությունը ժամանակակից ազգային պետություն է, *տարածաշրջանի երկրների հետ հավասար մակարդակի վրա է գտնվում* և իրենք կարող են դիվանագիտական հարաբերություններ կառուցել ցանկացած մեծ կամ փոքր երկրի հետ, որը նախկինում Օսմանյան կայսրության տիրապետության տակ է եղել[17]: Մի քանի տարի անց, կրկին անդրադառնալով խնդրին, Ա. Դավութօղլուն փորձել է ավելի մանրամասն հիմնավորել իր տեսակետը. «Որոշ շրջանակներ մեզ մեղադրում են նոր օսմանական քաղաքականություն վարելու մեջ: Այդ պնդումները անհիմն են: Ընդհանուր աշխարհագրությունը և պատմական հարաբերությունները տարածաշրջանի հետ դրդում են Թուրքիային ավելի ակտիվ քաղաքականություն որդեգրել այստեղ տեղի ունեցող նոր զարգացումներին ի պատասխան: Թուրքիան պարզապես հետամուտ է ժողովրդավարության հիման վրա մեր տարածաշրջանում անվտանգություն, խաղաղություն և կայունություն ապահովելուն: Թուրքիան տարածաշրջանի հետ կապված որևէ գաղտնի օրակարգ չունի: Արաբական երկրների հետ մեր հարաբերությունները պետք է բնութագրել ոչ թե «հեգեմոնիա», այլ «փոխշահավետ համագործակցություն» եզրով: Այդ պատճառով առկա բոլոր մտավախությունները հիմքից զուրկ են»[18]: Սակայն այդ քաղաքականության հիմքում ընկած երկու գլխավոր գաղափարներից մեկը Թուրքիայի՝ Օսմանյան կայսրության ժառանգորդ լինելն է: Ըստ Ա. Դավութօղլուի, համաշխարհային քաղաքականության մեջ որևէ պետության դերն ու արժեքը որոշվում են նրա աշխարհագրական դիր-

---

[17] A. Davutoglu: I am not a neoottoman, *Today's Zaman* , available at http://www.todayszaman.com/news-193944-i-am-not-a-neo-ottoman-davutoglu-says.html.

[18] Interview by Ahmet Davutoglu published in AUC Cairo Rewiew (Egypt) on Mar. 12 2012, available at http://www.mfa.gov.tr/interview-by-mr_-ahmet-davuto%C4%9Flu-published-in-auc-cairo-review-_egypt_-on-12-march-2012.en.mfa.

քով և պատմական անցյալով[19]: Նա համարում է, որ այդ տեսակետից Թուրքիան շահեկան վիճակում է, քանի որ ունի նպաստավոր աշխարհագրական դիրք և Օսմանյան կայսրության իրավահաջորդն է: Դավութօղլուն կարևորում է Թուրքիայի կապը Բալկանների, Մերձավոր Արևելքի, Կենտրոնական Ասիայի, Միջերկրական ծովի, Հարավային Կովկասի, կասպյան և սևծովյան ավազանների պետությունների հետ, այսինքն այն պետությունների, որոնք ժամանակին Օսմանյան կայսրության կազմում էին: Նա համարում է, որ Թուրքիան չպետք է կախված լինի որևէ ուժից, այլ պիտի ձգտի հավասարակշիռ հարաբերությունների և դաշինքների: Ըստ Դավութօղլուի, Թուրքիան պետք է ակտիվ դերակատարում ունենա այն տարածաշրջանում, որը նախկինում Օսմանյան կայսրության տարածքն էր հանդիսանում[20]: Պարզելու համար, թե արդյոք այն քաղաքականությունը, որը վերջին մեկ և կես տասնամյակում իրականացնում է Թուրքիան, կարելի է կոչել «Նոր օսմանականություն», անհրաժեշտ է այդ գաղափարախոսության հատկանիշներն ըստ ակադեմիական շրջանակների համեմատել Դավութօղլուի ծրագրային մոտեցումների հետ՝ ըստ «Ռազմավարական խորություն» մենագրության, և իրականացվող քաղաքականության հիմնական դրսևորումների հետ: Ըստ Մուրինսոնի, «Նոր օսմանականության» առանցքային գաղափարներն են իսլամն ու Թուրքիայի կայսերական պատմությունը՝ որպես արտաքին քաղաքականության ուղեցույց, ինչի արդյունքում մերժվում են երկրի աշխարհիկ քեմալական ժառանգությունը և հանրապետական դիվանագիտության ավանդույթները[21]: Թուրքիայի արտաքին քաղաքականության արմատական վերանայման անհրաժեշտությունն է շեշտում նաև Դավութօղլուն իր մենագրությունում. «վերջին տասնամյակում Թուրքիան իզուր հսկայական ջանքեր և ժամանակ է վատնել հարևանների հետ հակամարտությունների պատճառով: Որպեսզի Թուրքիան կարողանա դառնալ տարածաշրջանային առաջնորդ և ձեռք բերի գլոբալ ռազմավարական նշանակություն, պետք է ջերմ

[19] **Davutoğlu A.**, Stratejik …, 118.
[20] Նույն տեղում.
[21] **Murinson A.,** Turkish Foreign Policy in the Twenty-First Century, The Begin-Sadat Center for Strategic Stufies, Bar-Ilan University, Mideast Security and Policy Studies, No 97, 2012, 920.

հարաբերություններ հաստատի իր հարևանների հետ»[22]:

«Նոր օսմանականությանը» թուրք քաղաքագետների տված գնահատականները ևս բավական մոտ են Դավութօղլուի պատկերացումներին՝ ըստ «Ռազմավարական խորության»: Մասնավորապես, Օ. Թաշփինարի կարծիքով այդ գաղափարախոսությունն ունի երեք ընդգծված գործոն.

1. Երկրի ներսում և մուսուլմանական աշխարհի հետ գալ ընդհանուր համաձայնության: Մերձավոր Արևելքի, Բալկանների, Հյուսիսային Աֆրիկայի երկրների դեմ հանդես չգալ կայսերական դիրքերից: Օսմանյան կայսրության մաս կազմող նախկին երկրներին նոր օսմանականության դաշտ բերել «փափուկ» և հավասարակշիռ քաղաքականությամբ;

2. Թուրքիան պետք է վարի դիվանագիտական և տնտեսական առավել ակտիվ քաղաքականություն տարածաշրջանի առանցքային երկիր դառնալու համար;

3. Նոր օսմանականության քաղաքականությունը Թուրքիային հնարավորություն է տալու Արևմուտքից «պոկել» այն, ինչը մուսուլմանական է՝ Բոսնիա, Ալբանիա, Կոսովո, անգամ հիմնականում քրիստոնյա Մակեդոնիա և Բուլղարիա (հաշվի առնելով այս երկրներում մուսուլման բնակչության առկայությունը)[23]:

Ա. Դավութօղլուի «ռազմավարական խորություն» տեսությունն առաջարկում է քաղաքականությունը կառուցել հետևյալ հինգ սկզբունքների հիման վրա.

1. ժողովրդավարության և անվտանգության միջև հավասարակշռության պահպանում;

2. «զրո խնդիրներ հարևանների հետ» քաղաքականության որդեգրում՝ նկատի ունենալով հարևանների հետ առկա վեճերի լուծման և բարիդրացիական հարաբերությունների հաստատման անհրաժեշտությունը;

3. հարևան տարածաշրջաններում զարգացող և ամուր հարաբերությունների հաստատում, տարածաշրջանային և գլոբալ

---

[22] **Grigoriadis I.**, The Davutoğlu Doctrine and Turkish Foreign Policy,-ELIAMEP, Working Paper No. 8/2010, Greece, 5.

[23] **Taşpınar Ö.**, Neo-Ottomanism and Kemalist foreign policy, available at http://www.todayszaman.com/tz-web/columnists-153882-neo-ottomanism-and-kemalist-foreign-policy.html.

մակարդակով տնտեսական փոխգործակցության հաստատման և զարգացման անհրաժեշտություն;

4. բազմակողմ արտաքին քաղաքականության իրականացում;

5. «փափուկ ուժ»-ի քաղաքականության որդեգրում[24]:

Այդ ամենի վերջնական նպատակն է Թուրքիան դարձնել համաշխարհային քաղաքական դերակատար[25]:

«Նոր օսմանականության» համար Թաշփինարի մատնանշած գործոնների և «Ռազմավարական խորություն» տեսության համար Դավութօղլուի ձևակերպած սկզբունքների համեմատությունը ցույց է տալիս, որ դրանք, թեև որոշ չափով ունեն ձևաչափերի տարբերություններ, բայց բովանդակային առումով գործնականում նույնն են: Դավութօղլուի առաջին սկզբունքը համընկնում է Թաշփինարի առաջին գործոնի սկզբնամասի հետ, երկրորդ սկզբունքը՝ առաջին գործոնի երկրորդ մասի, երրորդ սկզբունքը՝ առաջին և երկրորդ գործոնների, չորրորդ սկզբունքը՝ առաջին և երրորդ գործոնների, իսկ հինգերորդ սկզբունքը՝ առաջին գործոնի վերջին դրույթի հետ: Թեև «Ռազմավարական խորության» հեղինակ Ա. Դավութօղլուն չի ցանկանում նկատել այդ ընդհանրություններն, այնուամենայնիվ, ակնհայտ է, որ դրանք այնքան շատ են, որ այդ տեսությունը կարելի է համարել «Նոր օսմանականության» տարատեսակ:

Տեսությունից՝ կիրառում. դիտարկման շրջանակների հիմնավորում

«Ռազմավարական խորություն» տեսության և «Նոր օսմանականություն» գաղափարախոսության համեմատական վերլուծության համատեքստում հատուկ հետաքրքրություն է ներկայացնում այն խնդիրը, թե ինչքանով է այդ ամենը կիրառվում Թուրքիայի արտաքին քաղաքականությունում և որոնք են դրա արդյունքները: Քանի որ ցույց տրվեց, որ «Ռազմավարական խորություն» տեսությունն ու «Նոր օսմանականություն» գաղափարախոսությունն ունեն

[24] **Davutoğlu A.**, Turkey's Foreign Policy Vision: An Assessment of 2007, *Insight Turkey*, **10**, 1, 2008, 79-83; Policy of Zero Problems with Our Neighbors, available at http://www.mfa.gov.tr/policy-of-zero-problems-with-our-neighbors.en.mfa.

[25] **Joshua W.**, Turkey's Imperial Legacy: Understanding Contemporary Turkey through its Ottoman Past, *Perspectives on Global Development and Technology*, **8**, 2-3, 2009, 498-505.

էական ընդհանրություններ, ապա խնդիրը կարելի է դիտարկել դրանցից առաջինի հինգ սկզբունքների կամ երկրորդի երեք գործոնների տեսակետից: Ստորև փորձ է արվում լուծել այդ խնդիրը հինգ սկզբունքների ենթատեքստում:

Նախ, անհրաժեշտ է հինգ սկզբունքների տեսական-ընդհանրական ձևաչափը փոխարինել կիրառական սխեմայով: Ստորև բերված համապատասխանության աղյուսակը կազմված է ԱԶԿ-ի իշխանության գալուց հետո Թուրքիայի արտաքին քաղաքական գործունեության առաջնահերթությունների և հիմնական ուղղությունների հիման վրա:

Աղյուսակ

	«Ռազմավարական խորություն» տեսության ընդհանրական սկզբունքները	**Կիրառական քաղաքականության ձևաչափը**
1.	ժողովրդավարության և անվտանգության միջև հավասարակշռության պահպանում	ԵՄ անդամակցության պարտավորությունների կատարում
2.	«զրո խնդիրներ հարևանների հետ» քաղաքականություն*	հարաբերությունների վիճակը Հայաստանի, Վրաստանի, Սիրիայի, Կիպրոսի, Իրանի, Իրաքի, Իսրայելի հետ
3.	հարևան տարածաշրջաններում զարգացող և ամուր հարաբերություններ*	Հարավային Կովկաս, Մերձավոր Արևելք, Բալկաններ, Սև ծովի ավազան, Կասպից ծովի ավազան
4.	բազմակողմ արտաքին քաղաքականություն	Ազդեցիկ ուժեր՝ ԱՄՆ, ԵՄ, ՌԴ

* «Ռազմավարական խորություն» տեսության այս սկզբունքները հարկ է դիտարկել Օ. Թաշփինարի ձևակերպած «Նոր օսմանականության» առաջին գործոնի հետևյալ դրույթի համատեքստում՝ «մուսուլմանական աշխարհի հետ գալ ընդհանուր համաձայնության»:

Հինգերորդ սկզբունքն աղյուսակից դուրս է մնացել այն պատճառով, որ այն ցույց է տալիս ոչ թե գործունեության ուղղություն կամ նպատակ, այլ՝ ձև: Անկարայի արտաքին քաղաքականության ծավալման տարածքը, ըստ բերված սխեմայի, ընդգրկում է այն տարածաշրջանները,

որտեղ ԽՍՀՄ փլուզումից հետո առավել ակտիվ պայքար է ծավալվել ազդեցության գոտիների վերաբաժանման և նոր աշխարհակարգի ձևավորման համար: Միաժամանակ, այդ տարածքը կազմող տարածաշրջանները կամ հարուստ են էներգակիրների պաշարներով, կամ դրանցով են անցնում էներգակիրների տեղափոխման հիմնական երթուղիները: Հետևաբար, Թուրքիայի արտաքին քաղաքական գործունեության արդյունքների ու վերը բերված սկզբունքներին դրանց համապատասխանության մասին սեղմ և ամբողջական բնութագիր ունենալու համար անհրաժեշտ է քննարկել նշված տարածաշրջաններում՝ հատկապես Մերձավոր Արևելքում և Հարավային Կովկասում, աշխարհաքաղաքական մրցակցության գործընթացի դրսևորումները: Ընդ որում, հետխորհրդային տարածքում, մասնավորապես, Հարավային Կովկասում այդ մրցակցության գլխավոր դերակատարների՝ Միացյալ Նահանգների, Ռուսաստանի և Եվրամիության պայքարի մեկնակետը կարելի է համարել 2008թ. ռուս-վրացական պատերազմը:

Արդյունքները և հեռանկարները աշխարհաքաղաքական մրցակցության համատեքստում

Այդ հսմատեքտում հարևան տարածաշրջաններում Անկարայի իրականացրած քաղաքականության արդյունքներն ու հեռանկարները դիտարկելիս կարելի է սահմանափակվել աղյուսակում նշված առաջին երեք տարածաշրջաններով, քանի որ Սև և Կասպից ծովերի ավազանների երկրների մի մասն ուղղակիորեն առնչվում է առաջին երկու տարածաշրջաններին կամ անուղղակիորեն մասնակից է այդ տարածաշրջաններում տեղի ունեցող գործընթացներին, որոնք ստորև կքննարկվեն: Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ եթե Բալկաններում այդ մրցակցությունն ավարտվել է դեռևս 1990-ականների վերջին՝ արևմտյան գերակայության լիարժեք հաստատմամբ, ապա մյուս երկու տարածաշրջաններում այդ պայքարը խորանում է: Թերևս դա է հիմնական պատճառը, որ ի տարբերություն Մերձավոր Արևելքի և Հարավային Կովկասի, Բալկաններում է, որ Անկարան արձանագրել է զգալի հաջողություններ: 2000-2008թթ. ընթացքում Թուրքիայի և բալկանյան երկրների միջև առևտուրն աճել է շուրջ վեց անգամ՝ 2.9

միլիարդ ԱՄՆ դոլարից հասնելով 17.7 միլիարդի:[26] Որպես այդ տարածաշրջանում Թուրքիայի ունեցած դիվանագիտական հաջողություն հատկանշական է 2010թ. ապրիլին տեղի ունեցած եռակողմ հանդիպումը՝ Թուրքիայի և Սերբիայի նախագահների, ինչպես նաև Բոսնիա-Հերցեգովինայի նախագահության նախագահող Հ. Սիլաջիչի միջև, որի արդյունքում վերականգնվեցին դիվանագիտական հարաբերությունները այդ երկու բալկանյան պետություններ միջև:

Թեև Անկարան Հարավային Կովկասում ընթացող աշխարհաքաղաքական մրցակցության մեջ էական դերակատարություն չի ունեցել, սակայն փորձել է ակտիվությամբ օգուտներ քաղել զագացումներից: Թուրքիան Հնգօրյա պատերազմի մասնակից չէր, սակայն պատերազմի ընթացքում և անմիջապես հետո աչքի ընկավ այնպիսի ակտիվ քայլերով, որոնք բազմակողմ արտաքին քաղաքականություն վարելու նախանշաններ էին: Այդ քայլերը համահունչ էին Դավութօղլուի կարծիքին, որ Թուրքիան ունի բազմակողմ արտաքին քաղաքականություն վարելու բոլոր հնարավորությունները[27], և կարիք ունի որդեգրելու ավելի հավասարակշռված դիրքորոշում՝ ԱՄՆ-ին անվերապահ աջակցելու փոխարեն[28]: Նախ, Հնգօրյա պատերազմի ընթացքում Թուրքիան թույլ չտվեց ամերիկյան ռազմանավերին իր վերահսկողության տակ գտնվող նեղուցներով օգնություն հասցնել ԱՄՆ անվերապահ աջակցությունը վայելող Վրաստանին, ապա, հրադադարից մի քանի օր անց Մոսկվա այցելած Թուրքիայի վարչապետ Ռ. Թ. Էրդողանն առաջարկեց ստեղծել «Կովկասի կայունության և համագործակցության պլատֆորմ»՝ հարավ-կովկասյան երկրների, ինչպես նաև ՌԴ-ի և Թուրքիայի մասնակցությամբ: Ընդ որում, ոչ միայն չնախատեսելով դրանում Վաշինգտոնի մասնակցությունն, այլև առանց այդ հարցը Միացյալ Նահանգների հետ նախապես քննարկելու: ՌԴ-ԱՄՆ աշխարհաքաղաքական պայքարում Մոսկվայի օգտին Անկարայի երրորդ, ավելի տպավորիչ ընտրությունը տեղի ունեցավ այդ պայքարի ամենաթեժ ժամանակահատվածում՝ 2014թ. վերջին: Ուկրաինայում իրավիճակի կտրուկ սրումից, ապա զինված բախումների վերածվելուց հետո ԵՄ-ն, Միացյալ Նահանգների կոշտ ճնշումների ներքո սկսեց պատժամիջոցներ կիրառել Ռուսաստանի

---

[26] **Türbedar E.,** Turkey's New Activism in Western Balkans: Ambitions and Obstacles, *Insight Turkey***, 13**, 3, 2011, 139-158.
[27]**Davutoğlu A.**, Stratejik ..., էջ 119:
[28] **Davutoğlu A.**, Turkey’s, ...

նկատմամբ: Դրանցից մեկը, հավանաբար Բրյուսելի կարծիքով ամենաազդեցիկը, անդամ երկրներին ստիպելն էր դուրս գալ ռուսական գազը Ուկրաինան շրջանցող երթուղով Եվրոպա տեղափոխելու համար նախատեսված «Հարավային հոսք» գազատարի կառուցման ծրագրից: Սկզբում, երբ հունիսին Բուլղարիան հայտարարեց, որ դուրս է գալիս ծրագրից (այդ երկրի տարածքով պետք է անցներ գազատարի եվրոպական հատվածի սկզբնամասը), թվաց, թե Մոսկվան հայտնվել է անելանելի իրավիճակում, քանի որ մեծ էին լինելու և տնտեսական կորուստները՝ ծրագրի նախապատրաստման համար ծախսվել էին տարիներ ու զգալի ֆինանսական միջոցներ, և քաղաքականը, քանի որ Ուկրաինայի հետ կապված խնդրում Ռուսաստանը զրկվելու էր շատ կարևոր լծակից: Այդուհանդերձ, Ռուսաստանի նախագահ Վ. Պուտինը 2014թ. վերջին, Անկարա կատարած այցի ժամանակ հրապարակեց բարդ խնդրի հանգուցալուծման Մոսկվայի սրամիտ, աշխարհաքաղաքական ծանրակշիռ նշանակություն ունեցող լուծումը: Ռուսաստանի նախագահը հայտարարեց, որ Ռուսաստանը փակում է «Հարավային հոսք» ծրագիրը և սկսում է իրագործել մեկ այլ՝ «Թուրքական հոսք» ծրագիր: Իհարկե, դա բոլորովին նոր ծրագիր չէ, քանի որ առաջարկվում է «Հարավային հոսքով» տեղափոխելու համար նախատեսված ամբողջ գազը (63 մլրդ խորանարդ մետր) նույն ճանապարհի սկզբնական հատվածով՝ Սև ծովի հատակով անցնող գազատարով, տեղափոխել և վաճառել Թուրքիային: Եվրոպան ստիպված կլինի այդ գազը գնել Անկարայից, քանի որ Ռուսաստանն այլ բան չի առաջարկելու իր գազի պաշարների զգալի մասը Մոսկվայից գնող եվրոպական երկրներին, միաժամանակ, Թուրքիայից գազը չգնելու լուրջ հիմնավորում չի լինելու: 2015թ. ապրիլին Թուրքիայի, Հունաստանի, Մակեդոնիայի, Սերբիայի և Հունգարիայի արտաքին գործերի նախարարները Բուդապեշտում քննարկել են «Թուրքական հոսք» ծրագրում իրենց երկրների մասնակցության հարցը և հայտարարել են, որ իրենց երկրները կմասնակցեն ծրագրին:

«Թուրքական հոսքն» այնպիսի հեռանկարներ է բացում Անկարայի առաջ, որոնց մասին եվրոպական շատ երկրներ միայն կերազեն: Պատահական չէ, որ Թուրքիան ոչ միայն չմիացավ հակառուսական պատժամիջոցներին, այլ ավելի է խորացնում Մոսկվայի հետ տնտեսական համագործակցությունն՝ ի հեճուկս ՆԱՏՕ-ի իր գործընկերների: Ավելին, Թուրքիայի նախագահ Ռ. Էրդողանն առաջարկում է ստեղծել Ռուսաստան-Թուրքիա-Իրան դաշինք՝ էապես

փոխելով աշխարհաքաղաքական իրավիճակը Մերձավոր Արևելքում: Իրանը Քաթարի հետ սկսել է գազի արդյունահանումը «Հյուսիսային Պարս» հանքավայրում, որը խոշորագույնն է աշխարհում[29]: Հեռանկարներն ավելի ամբողջական են դարձնում Կիպրոսի, Լիբանանի և, հատկապես, Իսրայելի առափնյա տարածքներում հայտնաբերված գազի զգալի պաշարները: Այդ երկրները ցանկանում են իրենց գազն առաջիկայում արտահանել Եվրոպա, որը հնարավոր է երկու ճանապարհով: Առաջինը ցամաքային է և անցնում է Թուրքիայի տարածքով, երկրորդը՝ Միջերկրական ծովի հատակով նախ հասցնելով Կիպրոս, ապա՝ Հունաստան, այնուհետև՝ ցամաքով Եվրոպա: Անկարան փաստարկներ ունի այս հոսքերն իր տարածքով ուղղորդելու համար՝ կիպրական չլուծված հակամարտությունը, Հունաստանի բարդ ֆինանսա-տնտեսական վիճակը: Սակայն կան լուրջ դժվարություններ թուրքական տարբերակի համար ևս: Էներգակիրների հսկայական հոսքերի կառավարումը պահանջում է համապատասխան ֆինանսական և քաղաքական ռեսուրսներ: Առաջինի տեսակետից Էրդողանի առաջարկած վերոհիշյալ եռակողմ դաշինքը լավ հեռանկարներ ունի: Սակայն այն իրագործելու համար պետք է համապատասխան գին վճարել. Ռուսաստանը ոչ մի կերպ չի համաձայնի, որ ՏԱՆԱՊ-ով տեղափոխվի նաև իրանական գազը, ինչն այդ խողովակաշարով տեղափոխվող էներգակիրները կդարձնի ռուսական գազի այլընտրանք Եվրոպայի համար: Հետևաբար Անկարան պետք է լուծի Ադրբեջանի հետ շահերի բախման խնդիր, քանի որ վերջինիս կարևորությունը Եվրոպայի համար կարող է առարկայական հիմքեր ստանալ միայն իրանական գազը ՏԱՆԱՊ-ով տեղափոխելու դեպքում: Իսրայելյան գազի տեղափոխման համար էլ անհրաժեշտ է վերականգնել վերջին տարիներին խաթարված Անկարայի համագործակցության ավանդույթներն այդ երկրի հետ, ինչին կարող են նպաստել գազի խնդրի առնչությամբ ընթացող բանակցությունները: Սակայն հարկ է նկատել, որ իրավիճակային լուծումները (մի քանի տարի առաջ հարաբերությունների վատթարացում Իսրայելի հետ՝ հանուն արաբական/մուսուլմանական աշխարհի հետ մերձեցման, ապա բարելավման փորձ՝ հանուն գազային երթուղիների) Անկարային հեռացնում են «Նոր օսմանականության» վերոհիշյալ առանցքային գաղափարներից մեկից՝ մուսուլմանական աշխարհի հետ

[29] Станислав Тарасов. Станет ли Путин Лениным, а Эрдоган – Ататюрком. Доступно www.regnum.ru/news/1872663.html

հատուկ հարաբերություններից: Մերձավոր Արևելքում և Հարավային Կովկասում տեղի ունեցող իրադարձությունների վերլուծությունը բացահայտում է Անկարայի ևս մեկ, թեկուզ և պոտենցիալ լուրջ խնդիր: 2008թ. ռուս-վրացական պատերազմից հետո այդ տարածաշրջաններում կատարված որևէ էական իրադարձության առնչությամբ Թուրքիան Միացյալ Նահանգների դիրքորոշումը չի պաշտպանել, մինչդեռ առնվազն չորս վերոհիշյալ դեպքերում դիրքորոշումը շահեկան է եղել պաշտոնական Մոսկվայի համար: Իհարկե, նպատակը Ռուսաստանին օգնելը չի եղել, այլ ազդեցիկ երկրների միջև լարվածության մեծացման պահերին առավել շահեկան դիրքորոշում դրսևորելը: Եթե առաջին նման փորձերը՝ հաշվի առնելով դրանց ոչ մեծ և ժամանակավոր հետևանքները, կարող էին և Միացյալ Նահանգների կոշտ արձագանքին չարժանանալ, ապա «Թուրքական հոսքի» դեպքը միանգամայն այլ է: Ճիշտ է, ծրագրի տապալմանն ուղղված ամերիկյան ջանքերը ուղղակիորեն Անկարային չեն վերաբերում, սակայն միայն այն պատճառով, որ դրանք ավելի արդյունավետ կլինեն, եթե ուղղվեն շղթայի ավելի թույլ օղակներին: Ըստ Հունաստանի արտաքին գործերի նախարարության, շրջակա միջավայրի և էներգետիկայի նախարար Պ. Լաֆազանիսի[30], ԱՄՆ Պետդեպարտամենտի հատուկ բանագնաց Ա. Հոքսթայնի հետ բանակցություններում վերջինս հայտարարել է, որ Միացյալ Նահանգների համար «Թուրքական հոսքի» իրագործումը ցանկալի չէ և Հունաստանին խորհուրդ է տվել հրաժարվել այդ ծրագրից ու կենտրոնանալ Անդրադրիատիկ գազատարի (TAP) վրա: Հունաստանի կառավարությունը համարում է, որ «Թուրքական հոսքն» իր երկրի համար շահավետ է և ջանքեր է գործադրելու դրա իրագործման համար:[31] Հաշվի առնելով Հունաստանի բարդ ֆինանսատնտեսական վիճակը՝ կարելի է ենթադրել, որ այդ երկիրը շատ ավելի վճռական կլինի, քան «Հարավային հոսքից» հրաժարված Բուլղարիան, սակայն դժվար չէ ենթադրել, որ ճնշումներն Աթենքի վրա կմեծանան: Ընդ որում, դրանք ավելի առարկայական կարող են լինել Եվրամիությունից: Վերոհիշյալ երկրների շղթայում ևս մեկ թույլ օղակ է Մակեդոնիան: Ճիշտ է, այն Եվրամիության անդամ չէ և Բրյուսելի ազդեցության

[30] US urges Athens to focus on TAP, not Turkish Stream, available at http://www.infobalkans.com/2015/05/08/us-urges-athens-focus-tap-not-turkish-stream, 14.05.2015

[31] США прямо заявили, что не хотят участия Греции в «Турецком потоке», Доступен www.regnum.ru/news/1923051.html

հնարավորությունները մեծ չեն, սակայն այստեղ կա ավելի ազդեցիկ այլ գործոն: Մակեդոնիայում կա ալբանական համայնք, որը վայելում է Կոսովոյի և Ալբանիայի իշխանությունների աջակցությունը, ագրեսիվ է՝ ունի զինված կազմավորումներ, և էական ազդեցություն երկրի ներքաղաքական կյանքում: Կարծիք կա[32], որ երկրի կառավարման հարցերում արևմտյան ուղղորդումները մերժող Մակեդոնիայի կառավարության դեմ սկսված բողոքի ցույցերը «գունավոր հեղափոխություն» կազմակերպելու, ինչպես նաև «Թուրքական հոսք» խողովակաշարի անցկացումն այդ երկրի տարածքով թույլ չտալու նպատակ ունեն, և վայելում են նման փորձ ունեցող արտաքին ուժերի աջակցությունը: Մակեդոնիայի ալբանական համայնքն այդ գործողություններում ակտիվ դերակատարություն ունի: Այդ առումով Թաշփինարի ձևակերպած «Նոր օսմանականություն» գաղափարախոսության երրորդ գործոնը պետք է դիտարկել վերապահումով՝ «եթե դա չի հակասում Միացյալ Նահանգների շահերին», քանի որ Բալկաններում և, մասնավորապես, այդ տարածաշրջանի մուսուլմանական համայնքների վրա ունեցած ազդեցությամբ Վաշինգտոնը մրցակից չունի:

Թուրքիային աննախադեպ հեռանկարներ խոստացող վերոհիշյալ հնարավորությունները խամրում են նաև Սիրիայում և Իրաքում ընթացող ռազմական գործողությունների առկայությամբ, որի գլխավոր կողմերից մեկի՝ «Իրաքի և Լևանտի իսլամական պետություն» կազմակերպության չեզոքացման խնդրի հեռանկարային լուծումներ դեռևս չեն նշմարվում: Այդ երկու երկրների հետ կապված խնդիրները չեն սահմանափակվում էներգակիրների տեղափոխման հարցերով: Երկուսի հետ էլ՝ որպես հարևան և մուսուլմանական երկրներ, Անկարան ոչ միայն չի կարողանում ստեղծել բնականոն հարաբերություններ, այլև ժամանակ առ ժամանակ իրավիճակը ծայր աստիճան սրվում է:

Հարևանների առումով ավելի բարվոք է թվում վիճակը Հարավային Կովկասում, սակայն այստեղ էլ կան ավանդական (Հայաստան, Ցեղասպանության ճանաչման և Լեռնային Ղարաբաղի խնդիրներ) և հնարավոր լարվածություններ (Ադրբեջան, իրանական գազի տեղափոխման երթուղի):

---

[32] США готовят в Македонии «цветную революцию» против «Турецкого потока», Доступно www.regnum.ru/news/polit/1922213.html

Ինչ վերաբերում է աղյուսակում բերված առաջին սկզբունքին՝ ժողովրդավարության և անվտանգության միջև հավասարակշռության պահպանում, ապա ակնհայտ է, որ թեև այն վերաբերում է ներքաղաքական կյանքին, սակայն այդ սկզբունքի իրացման վիճակը լիովին արտացոլում է ԵՄ անդամակցության առնչությամբ ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքի գնահատականը:[33] Այդ ուղղությամբ Թուրքիայի իշխանություններն էական ձեռքբերում ունեցել են՝ ԱԶԿ-ի իշխանության գալով արտաքին քաղաքականությունն աստիճանաբար անցավ քաղաքական իշխանության լիակատար վերահսկողության ներքո՝ զինվորականությանը զրկելով դրա վրա ազդելու լծակներից, որոնց ավանդաբար տիրապետում էր[34]: Այդուհանդերձ, պարտավորությունների կատարման ուղղությամբ թերացումների ծավալն այնքան մեծ է, որ ընդհանուր բացասական գնահատականը վիճարկելն անիմաստ է, թեև Ա. Դավութօղլուի ղեկավարած կառավարության գլխավոր արտաքին քաղաքական նպատակ է սահմանված անդամակցությունը ԵՄ-ին: Հաշվի առնելով Անկարայի ավելի ու ավելի սերտացող հարաբերությունները Ռուսաստանի հետ, պետք է ենթադրել, որ առաջիկայում եվրոպական կառույցներն ավելի խստապահանջ կլինեն Թուրքիայի նկատմամբ՝ անդամակցության պարտավորությունների կատարման հետ կապված թերացումների հարցում: Պատահական չէ, որ ԵՄ ընդլայնման և հարևանության քաղաքականության հարցերով եվրահանձնակատար Յ. Հանը հայտարարել է, որ Հայոց ցեղասպանության հարցում եվրոպական երկրների վրա Թուրքիայի հարձակումները միայն բարդացնում են ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության հարցը[35]: Եվրախորհրդարանի ընդունած բանաձևը՝ Ցեղասպանության տարելիցի կապակցությամբ ևս հաստատում է Անկարայի նկատմամբ ԵՄ կոշտացող վերաբերմունքի մասին:[36] Սակայն

---

[33] European Parliament resolution on the situation in Turkey, June 13, 2013, Strasbourg, 13.06.2013, http://www.europarl.europa.eu/sides/getDoc.do?pubRef=-//EP//TEXT+TA+P7-TA-2013-0277+0+DOC+XML+V0//EN.

[34] **Murinson A**.,...

[35] ԵՄ. Ցեղասպանության հարցում Անկարայի վարքը խոչընդոտում է եվրաինտեգրման իր պլաններին: Մատչելի է http://news.am/arm/news/264682.html, 30.04.2015

[36] Armenian genocide centenary: MEPs urge Turkey and Armenia to normalize relations, available at http://www.europarl.europa.eu/news/en/news-room/content/20150413IPR41671/html/Armenian-genocide-centenary-MEPs-urge-Turkey-and-Armenia-to-normalize-relations, 15.04.2015

ակնհայտ է նաև, որ այս սկզբունքի կիրառմանն ուղղված հնարավոր քայլերը ոչ միայն Թուրքիային կմերձեցնեն ԵՄ-ին, այլև կհեռացնեն մուսուլմանական աշխարհից, հետևաբար և նոր օսմանականությունից: Միջանկյալ դիրք, որը կարող է երկու խնդրի համար էլ լուծում լինել, գործնականում հնարավոր չէ գտնել, քանի որ երկու կողմերը հիմնված են միանգամայն տարբեր, իսկ որոշ դեպքերում՝ հակոտնյա գաղափարների ու արժեքների վրա: Այդ տեսակետից այս սկզբունքի առկայությունը «Ռազմավարական խորություն» տեսությունում կարող է Ա. Դավութօղլուի համար լավ հիմնավորում լինել, պնդելու համար, որ իրենց քաղաքականությունը չպետք է կոչել «Նոր օսմանականություն», սակայն դա չի հեշտացնի իրավիճակը:

Դժվար չէ նկատել, որ որևէ ուղղությամբ հռչակված սկզբունքները կամ չեն գործում ընդհանրապես, կամ գործում են շատ մեծ վերապահումներով: Ա. Դավութօղլուն ձգտում է կանխել նման գնահատականը, որը վերջին տարիներին նկատելի է Անկարայի քաղաքականության վերլուծությանը նվիրված զգալի թվով աշխատություններում: Նա փորձել է հիմնավորել, որ իր մշակած քաղաքականությունը չի ձախողվել[37]: Սակայն ձախողման մասին են վկայում անգամ այն աշխատությունները, որոնց հեղինակներն ուղղակիորեն չեն անդրադարձել այդ խնդրին: Մասնավորապես, Օ. Թաշփինարը նշում է, որ հնարավոր է առկա զարգացումները հանգեցնեն նրան, որ ապագայում ձևավորվի մի նոր քաղաքական դոկտրին, որը ներդաշնակեցնի նոր «օսմանականության» և «քեմալականության» գաղափարախոսությունները: Հեղինակն այս նոր հնարավոր դոկտրինը բնորոշում է «թուրքական գոլիզմ» եզրով, ըստ որի երկիրը պետք է վարի առավել ինքնուրույն, ինքնաբավ քաղաքականություն՝ արևմտյան ռազմաքաղաքական դաշինքի շրջանակներից դուրս: Ըստ Օ. Թաշփինարի, Թուրքիան կարող է ընտրել այդ ուղին, և դրա համար հիմք կարող են ծառայել այն սկզբունքային ընդհանրությունները, որոնք առկա են նոր օսմանականության և քեմալիզմի հիմքերում, մանավորապես, պետական

[37]**Davutoglu A.,** Zero Problems in a New Era, *Foreign Policy Magazine*, 21.03.2013, available at, http://www.foreignpolicy.com/articles/2013/03/21/zero_problems_in_a_new_era_turkey.

շահի գերակայությունը[38]: Ակնհայտ է, որ քաղաքական նոր հայեցակարգ է առաջարկվում այն ժամանակ, երբ գործողը սպառել է իրեն կամ անարդյունավետ է:

Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ տեղի ունեցած փոփոխություններն ու ներկայիս վիճակը նկարագրելու նպատակով Ա. Դավութօղլուն օգտագործել է այլաբանական մոտեցում. «2001 թվականի Թուրքիան նման էր մի մարդու, ով ուներ ուժեղ բազուկներ, դատարկ ստամոքս, հիվանդ ուղեղ և անառողջ սիրտ: Ուժեղ բազուկները հզոր բանակն էր, դատարկ ստամոքսը՝ թույլ տնտեսությունը, հիվանդ ուղեղը՝ ռազմավարական տեսլականի բացակայությունը և անառողջ սիրտը՝ վստահության բացակայությունը: Այժմ ամեն ինչ փոխվել է. բանակը շարունակում է մնալ հզոր, ինչը մեր տարածաշրջանում անհրաժեշտություն է, մեր տնտեսությունն այժմ ուժեղ է, իսկ այն ունենալու համար անհրաժեշտ է լավ ուղեղ՝ ռազմավարական տեսլական»[39]: Դժվար չէ նկատել, որ Դավութօղլուն 2012թ. Թուրքիան նկարագրելիս իր առաջարկած մոդելի չորս բաղադրիչներից մեկի՝ «սրտի» մասին ընդհանրապես չի հիշատակում, իսկ ուղեղի մասին խոսում է ապագայի ակնկալիքով՝ «անհրաժեշտ է»: Տրված գնահատականը ոչ միայն լավ է նկարագրում ժամանակակից Թուրքիան, այլև հաստատում է, որ այդ գործունեությունն իսկապես զուրկ է տեսական հիմնավորումներից ու գաղափարախոսական հիմքից:

Եզրակացություն

«Ռազմավարական խորություն» տեսության և «Նոր օսմանականություն» գաղափարախոսության համեմատական վերլուծությունն, ինչպես նաև այդ համատեքստում «Արդարություն և զարգացում» կուսակցության իշխանության շրջանում Թուրքիայի արտաքին քաղաքականության վերլուծությունը ցույց են տալիս, որ

[38]**Taspinar Ö.,** The three startegic visions of Turkey,- *US-Europe Analysis Series*, Number 50, March 8, 2011, Center on the United States and Europe at Brookings, 1-5.

[39]**Davutoglu A.,** World's a stage for Turkey, Interview by Ahmet Davutoğlu published in The Australian Newspaper (Australia) on 21 January 2012, available at http://www.mfa.gov.tr/interview-by-h_e_-ahmet-davuto%C4%9Flu-published-in-the-australian-newspaper-_australia_-on-21-january-2012.en.mfa.

1. ԽՍՀՄ փլուզումից և նոր աշխարհակարգի ձևավորման գործընթացի մեկնարկից հետո Թուրքիայի բոլոր քիչ թե շատ ազդեցիկ քաղաքական ուժերի արտաքին քաղաքական մոտեցումների հռչակված հիմքը «Նոր օսմանականություն» գաղափարախոսության տարատեսակներն են: «Ռազմավարական խորություն» տեսությունը և «Նոր օսմանականություն» գաղափարախոսությունն ունեն էական ընդհանրություններ և առաջինը, որոշ վերապահումներով, կարելի է համարել երկրորդի տարատեսակ, որը ԱԶԿ իշխանության օրոք հռչակվել է Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմք;

2. թեև ԱԶԿ իշխանության օրոք Թուրքիայի իշխանությունները շարունակաբար ջանքեր են գործադրում ցույց տալու, որ այդ երկրի արտաքին հարաբերությունների հիմքում «Ռազմավարական խորություն» տեսության հինգ սկզբունքներն են, սակայն իրականացվող քաղաքականության վերլուծությունը ցույց է տալիս, որ հռչակված սկզբունքների ու քաղաքական գործունեության արդյունքների միջև կան էական տարբերություններ;

3. հարակից տարածաշրջաններում իրականացվող քաղաքականության առումով Անկարան լուրջ հաջողություն է արձանագրել միայն աշխարհաքաղաքական մրցակցության տեսակետից ունեցած նշանակությամբ Մերձավոր Արևելքին և Հարավային Կովկասին զիջող Բալկաններում;

4. հարևան երկրների հետ հարաբերություններում Թուրքիան ոչ միայն չի կարողացել իրացնել «զրո խնդիրներ հարևանների հետ» հռչակված քաղաքականությունն, այլև չի կրճատել այն հարևանների թիվը, որոնց հետ լուրջ խնդիրներ ունի;

5. ազդեցիկ ուժերի հետ բազմակողմ հարաբերությունների ձևավորման նպատակը ևս իրագործված չէ, քանի որ գործնականում կիրառվում է իրավիճակային լուծումների մարտավարությունը: Այդ առումով քեմալական արտաքին քաղաքականության համեմատ որևէ փոփոխություն հնարավոր չէ արձանագրել: Այդ քաղաքականությունը հատուկ է բարդ իրավիճակներում հայտնված և ընտրության սահմանափակ հնարավորություններ ունեցող երկրներին: Հետևաբար արտաքին հարաբերություններում իրական նոր օսմանականության հիմքեր չկան: Ավելին, այդ մարտավարության կիրառումը առաջիկայում կարող է լուրջ մարտահրավերների առջև կանգնեցնել Թուրքիային, քանի որ կիրառվող քաղաքականության արդյունքում լրջորեն խախտվում է

վերոհիշյալ տարածաշրջաններում երեք ազդեցիկ արտաքին ուժերի՝ Միացյալ Նահանգների, Ռուսաստանի և Եվրամիության հետ հարաբերություններում Անկարայի դիրքորոշման հավասարակշռությունը;

6. նոր աշխարհակարգի ձևավորման գործընթացներով պայմանավորված առկա են Թուրքիայի դիրքերի էական բարելավման հեռանկարներ՝ Հարավային Կովկասի և Մերձավոր Արևելքի գազային պաշարները Եվրոպա տեղափոխելու ծրագրերը համապատասխան ձևաչափով իրականացնելու պարագայում, սակայն նման ընթացքի ապահովման համար Թուրքիան պետք է կարողանա հաղթահարել բարդ մարտահրավերներ և լուծել բազմագործոն խնդիրներ: Վերջին մեկ դարի ընթացքում Թուրքիայի համար ավանդական դարձած իրավիճակային լուծումների մարտավարությունը նման խնդիրների լուծման լավագույն հնարավորությունը չէ:

Turkish Modern Foreign Policy: New Challenges and New Opportunities

TIGRAN TOROSYAN
Brusov State University of Languages and Social Sciences
GRIGOR ARSHAKYAN
Brusov State University of Languages and Social Sciences

The article analyzes the prerequisites, objectives and theoretical bases of the essential changes of Turkish foreign policy in the new geopolitical situation caused by the collapse of bipolar world order. The article discusses the similarities and differences between "Neo-Ottomanism" ideology and "Strategic depth" theory, which was declared as a theoretical basis of Turkish foreign policy since coming to power of "Justice and Development" party. The article reveals the state and prospects of the compliance of current foreign policy proclaimed objectives with their results in the context of geopolitical rivalry. The analysis of current foreign policy demonstrates that it does not fully correspond either to “Strategic Depth” theory or to “Neo-Ottomanism” ideology, but to the situational tactics used by Qemal Ataturk. Hence, though there are significant perspectives for the improvement of Turkey’s positions in the case of realizing in proper format the transportation of gas resources from South Caucasus and Middle East to Europe, still serious challenges and problems are being outlined on that path.